

Էջ 1—48. «Տօմար իւրճուոր: Այսինքն Համառութիւն Հնոյ տօմարին Հռօմայեցւոց, որով Հասարակաբար վարի ազգս Հայոց: Շարակարգեցեալ դիւրին ոճիւ եւ ի յօգուտ պարզամտաց: Ի Գերյարգելի Մեկնութեայ Սեբաստացոյ Աբբատացոյ կոչեցելոյ Յամի Տեառն 1733, Տպագրեցեալ ի վէնէտիկ, ի տպարանի Անտօնի Պօռթօլի, Հրամանաւ մեծաւորաց: Այս գիրքը տպուած է ի վենետիկ՝ Ա. տպ. 1733, Բ. 1748 (այս), Գ. 1755, Դ. 1771, Ե. 1807 (Սաղմոսի ետեւ):

Էջ 1—72. «Համառօտ գրգուկ իմն լնն Նախնականութեան, զոր արար ըստ խնդրոյ սմանց բանասիրաց Սուրբն Թօմաս Աբուինացի, որ եւ ասի Հրեշտակական վարդապետ: Որ եւ ըստ խնդրոյ իմ թարգմանեցեալ եղեւ ի Ղազարի վարդապետի խմբելոցոյ ի կոստանդնուպօլիս: Բայց ըստ տնօրինման Տեառն տպագրեալ եղեւ յարմարագրութեամբ ի փառս Աստուծոյ եւ ի յօգուտ բանասիրաց Ազգի մերոյ, ի վէնէտիկ:»

6. «Կանոն և ներդրութիւն, վասն նոցա, որք գրին ի յընկերութիւն, կամ ի ժողովս ջերմեանդութեան քրիստոսի Աստուծոյ մերոյ ի խաչին տագնապեցելոյ, եւ ցաւազին մօր նորա սուրբ Կուսին: Որ եւ կոչի կրկնութիւն բարեւոյ և երանի յեկեղեցւոյ Հարց կարգին Յիսուսեանց: Թարգմանեցեալ ի հոյ բարբառ: Յամի Տեառն 1748, Օգոստոսի 7, ի վէնէտիկ, ի տպ. Անտօնի Պօռթօլի:» (Չ. Մատեն. էջ 496):

Մեծութիւն 9.5×5.5 սմ. էջ 1—29:

Այս տետրակիս գիրք Սարգսի շինել տուած մեծկակ դրէն ըլլալուն՝ իրեն կր վերագրեմ:

7. «Ան իւրճուոր, Յորում գտանին սքանչելի աղօթք, Նախ վասն ամենայն աւուր շաբաթու: Երկրորդ՝ վասն առաւօտու, միջօրէի եւ երեկոյի: Երրորդ՝ մաղթանք ամեներանեալ Կուսին՝ ոտանաւոր կերպիւ: Եւ չորրորդն քննութիւն խղճի